«ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ»
Հայաստանում՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգի հետազոտություն

«ՀԱՆՈՒՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ԻՀԿ
2022թ.

Եվրոպական միության ֆինանսավորմամբ ընթացող «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության «Քաղաքացիական հասարակության դերակատարները՝ որպես փոփոխությունների կրողներ Հարավային Կովկասում և Մոլդովայում» ծրագրի շրջանակում 2021թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2021թվականի հունիսի 24-ը իրականացրեց «Մենք կարող ենք» դրամաշնորհային արշավի ծրագիրը: Այն նպատակ ուներ բարելավելու պատժի կրումից՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու ներկայում գործող ընթացակարգը: Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անանց և նախկին դատապարտյալների շրջանում անց կացվեցին սոցհարցումներ, նախագծի վրա աշխատեց փորձագիտական խումբը, կազմակերպվեցին հանրային քննարկումներ: Առաջարկների նախագիծը ուղարկվել է շահագրգիռ կողմերին՝ ՀՀ արդարադատության նախարարություն, քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններ, Ազգային ժողովի պետա-իրավական հարցերի, մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովներին, ՀՀ գլխավոր դատախազին, Մարդու իրավունքների պաշտպանին: Ստորև ներկայացնում ենք կատարված հետազոտությունը՝ կապված պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգի հետ, ինչպես նաև առաջարկվող փոփոխությունները:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Հանուն Ազատության» ԻՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի տեսակետները:

ՑԱՆԿ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ……..3
2. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ……...……8
3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՅՑԸ ՔՆՆԱՐԿԵԼԸ……11
4. ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ԱՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ……..11
5. ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՈՒ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ….16
6. ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍՈՑՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ……18

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Քրեակատարողական հիմնարկն այն վայրն է, որն ապահովում է կալանավորման՝ որպես խափանման միջոցի, և ազատազրկման՝ որպես պատժի տեսակի կատարումը: Հայաստանի քրեակատարողական հիմնարկները գործում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, իսկ վերջինս՝ ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության ներքո:Ներկայումս Հայաստանում գործում է 10՝

«Աբովյան» «Արթիկ», «Արմավիր», , «Գորիս» , «Դատապարտյալների հիվանդանոց» «Երևան-Կենտրոն» , «Նուբարաշեն» «Սևան», «Վանաձոր», «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներ /ՔԿՀ/:

«Կոշ» և «Հրազդան» ՔԿՀ-ների գործունեությունը ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1755-Ն որոշմամբ 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է:

Հայաստանի Հանրապետությունում 2022թ.-ի հունիսի 1-ի դրությամբ գործում է

Ազատությունից զրկված անձանց իրավական կարգավիճակի կարևորագույն մաս է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտների արդյունավետ գործունեությունը: Պատժի կատարմամբ իրականացվում են պատժի օրենքով նախատեսված նպատակները, հատկապես դատապարտյալի վերասոցիալականացումը: Եթե այն, որպես պատժի կարևոր նպատակ իրականացվել է մինչև պատժի ժամկետի ավարտը, ապա պատժի հետագա կրումը դառնում է աննպատակահարմար: Այդ պատճառով օրենքը դատարանին հնարավորություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել այն անձանց, ովքեր կարիք չունեն նշանակված պատժի մնացած մասը կրելու:

Վերջին տարիներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը ենթարկվել է փոփոխությունների, մասնավորապես վերացվել են անկախ հանձնաժողովները, դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատվելիս՝ հաշվի են առնվում ՀՀ արդարադատության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունները, որոշումների բողոքարկման հնարավորությունները: Չնայած այս ամենին՝ վերջին տարիներին իրավիճակը Հայաստանում չի փոխվել:

Վերջին երեք տարիներին պայմանական վաղաժամկետ ազատ արձակման դիմումների շատ քիչ մասն է բավարարվել։ Այսպես՝

- 2019 թ.–ին եղել է 1138 դիմում, որից բավարարվել է միայն 212–ը,
- 2020 թ.–ին 722 դիմումից բավարարվել է 199–ը,
- 2021թ.–ին պայմանական վաղաժամկետ ազատման մասին դիմում ներկայացրել է 740 մարդ, նրանցից ազատ է արձակվել միայն 182–ը։

2022թ.-ի հուլիսի 1-ից գործողության մեջ է մտնում ՀՀ նոր քրեական օրենսգիրքը։ Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կարգը ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 85–րդ՝ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը» հոդվածում։ Ըստ այդ հոդվածի 4-րդ մասի՝ դատապարտյալը կարող է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե կրել է՝

- 5 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,
- 15 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երկրորդը,
- 30 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը,
- նոր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը՝ նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու և այն վերացվելու դեպքում.
- ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան 20 տարին՝ ցմահ ազատազրկման դատապարտված լինելու դեպքում ։

Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝

կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 85–րդ՝ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը» հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

- պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշաճ վարքագիծ և
- նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

Դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- պատժի կրման ընթացքում խրախուսանքի կամ տույժի առկայությունը,
- պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն,
- պատժի կրման ընթացքում աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, և չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով,
- դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- դատապարտյալի տարիքը պատիժը կրելու, ինչպես նաև հանցանքը կատարելու պահին,
- հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,
- ռեցիդիվի առկայությունը,
- կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը,
- հանցագործությամբ պատճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը, կամ վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնած լինելը,
- քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը,
- որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները,
- մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին,
- ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,
- սոցիալական միջավայրը,
- առողջական վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և բուժման արդյունքը,
- հանցանքի կատարմանը նպաստած հանգամանքների փոփոխությունները,
- դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

Կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող 3 ամսից պակաս լինել:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելու դեպքում պատժի չկրած մասը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո: Ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս սահմանվում է փորձաշրջան՝ 10 տարի ժամկետով:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելիս դատարանն անձի վրա դնում է ՀՀ օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը: Դրանք են

- կրթական և մշակութային ծրագրերին մասնակցելը, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելը,
- առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելը,
- բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը,
- ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելը,
- հանրօգուտ աշխատանքներում ներգրավվելը,
- սեռավարակից կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունից բուժման կուրս անցնելը,
- տուժողի, նրա ընտանիքի անդամի, նրա խնամքի տակ գտնվող անձի կամ դատարանի կողմից նշված այլ անձի հետ որևէ շփում ունենալու արգելքը,
- որոշակի վայրեր այցելելու արգելքը,
- հոգեբանական-վերականգնողական կուրս անցնելը:

Եթե դատապարտյալը դեռևս չի հատուցել կամ այլ կերպ հարթել տուժողին պատճառված իրական վնասը, ապա դատարանը դատապարտյալի վրա նման պարտականություն է դնում: Միաժամանակ եթե պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձը խուսափում է դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց կամ վերահսկողությունից, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը:

Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք կամ պարզվում է, որ նա հանցանք է կատարել պատիժը կրելու ընթացքում, ապա դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը և պատիժ է նշանակում ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ՝ «**Պատիժ նշանակելը դատավճիռների համակցության դեպքում**» հոդվածով սահմանված կարգով:

Փորձաշրջանի ընթացքում եթե պարզվում է, որ անձը մինչև դատապարտվելը կատարել է այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը և պատիժ է նշանակում ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ՝ «**Պատիժ նշանակելը հանցագործությունների համակցության դեպքում**» հոդվածով սահմանված կարգով: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկն սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից պատժի կրումը վերսկսելու պահից:

Դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցանք կատարելու դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետի ընթացքն ընդհատվում է: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկն սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից հիմնական պատժի կրումն սկսելու պահից:

Եթե ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձն այնպիսի նոր հանցանք է կատարել, որի համար նշանակվում է ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ, ապա 85-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև ազատազրկման ձևով նոր նշանակված պատժի ժամկետը լրանալը, իսկ ցմահ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու դեպքում՝ մինչև 20 տարին լրանալը:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում անձը չի ազատվում իր նկատմամբ նշանակված լրացուցիչ պատժից:

Այլ պատժատեսակն ազատազրկմամբ փոխարինելիս դատապարտյալը չի կարող պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի կրումից:

Անչափահասների և 21 տարին չլրացած անձանց առնչությամբ ՀՀ քրեական օրենսդրությունը նախատեսում է ոչ միայն պատժի նշանակման, այլ նաև քրեական պատասխանատվությունից և պատժի ազատման առանձնահատկություններ: Ըստ

այդմ, ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է առանձնահատկություններ նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու առնչությամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև 21 տարին լրանալը հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

- 3 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ քառորդը,
- 5 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երրորդը,
- 10 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երկրորդը,
- 10 տարուց ավելի ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան երկու երրորդը:

Փորձաշրջանի նշանակվող պարտականությունների, դրանց նկատմամբ իրականացվող վերահսկողության և այլ կարգավորումները նույն են,ինչ պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ընդհանուր կարգի ժամանակ:

2.ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Համաձայն 2018 թվականի օրենսդրական կարգավորումների՝ պայմանական վաղաժամկետ ազատման հարցը մինչև դատարան ուղարկելը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ու պրոբացայի ծառայությունները պետք է կազմեն զեկույցներ:

Ըստ գործող ընթացակարգի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակով դատապարտյալը պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ իրավունք ունի գրավոր դիմում ներկայացնել պատիժը կատարող հիմնարկի վարչակազմին: Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը սույն մասով նախատեսված ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ պարտավոր է դատապարտյալին գրավոր կերպով ծանուցել դիմում

ներկայացնելու կարգի մասին: Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է պրոբացիայի ծառայությանը: Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալուց հետո՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարի սահմանած ժամկետում և կարգով, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը: Քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը պաշտոնական ծանուցումն ստանալուց հետո՝ 80 օրվա ընթացքում, կազմում և ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝ կազմում ենլ զեկույցներ: Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները դրական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան[1]:

Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցներից մեկը բացասական է, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում, եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն, և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան: Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում: Այս դեպքում դատապարտյալը կարող է որոշումը բողոքարկել դատարան:

Քրեակատարողական ծառայության կամ պրոբացիայի կողմից ներկայացված զեկույցներից մեկը բացասական է, ապա դատապարտյալի պայմանական

վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկել համապատասխան որոշման ընդունումից հետո երեք ամիս անց:

Դրական զեկույցների դեպքում՝ մինչև զեկույցները դատարան ներկայացնելը, իսկ զեկույցներից առնվազն մեկի բացասական լինելու դեպքում՝ մինչև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից որոշում ընդունելը, դատապարտյալը, ըստ գործող կարգի՝ իրավունք ունի.

- իրեն մատչելի ձևով, այդ թվում՝ համապատասխան մասնագետի միջոցով ծանոթանալու իր վերաբերյալ կազմված նյութերին և անվճար ստանալու դրանց պատճենները.
- ներկայացնելու բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալու հայտարարություններով.
- հայտնելու իր կարծիքը իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ.
- ստանալ իր վերաբերյալ կազմված զեկույցները.
- հայերենին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվելու թարգմանչի ծառայություններից.
- օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքներ:

«Հանուն Ազատության» ԻՀԿ-ի կողմից անցկացված սոցհարցումից պարզվել է , որ պատկան մարմինները արդեն կազմված զեկույցներում հաշվի չեն առնում տվյալ դատապարտյալի կարծիքը, բացատրությունը կամ պարզաբանումը: Ավելիք, երբեմն քրեակատարողական հիմնարկի պետը եթե զեկույցներից մեկը բացասական է լինում՝ ինքն է դատապարտյալի փոխարեն որոշում կայացնում:

3.ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՅՑԸ ՔՆՆԱՐԿԵԼԸ

Ըստ հետազոտությունների ու դատապարտյալների շրջանում

անցկացված սոցհարցումներից պարզվել է, որ դատարանները ծանրաբեռնվածության պատճառով՝ պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծելիս ողջամիտ ժամկետում դատական նիստ չի նշանակում: Ավելին՝ անհարկի հետաձգում են նիստերը: Դատավորները չեն ծանոթանում տվյալ դատապարտյալի գործին, այլ բավարարվում են միայն քրեակատարողական ու պրոբացիայի կազմած զեկույցները ծանոթանալով: Ըստ դատապարտյալների՝ դատավորներից ոմանք, անկախ դատապարտյալի դրսևորած վարքագծից, զեկույցների բովանդակություններից, վերջնական որոշում կայցնելիս հիմնվում են դատախազների միջնորդությունների վրա: Ցմահ դատապարտյալների փաստմամբ՝ դատավորները հաշվի են առնում տուժողների տեսակետը, որը, մեծ մասամբ բացասական է լինում և վերնջական որոշման մեջ դա հաշվի առնելով ցմահ դատապարտյալներին դատավորները պայմանական վաղաժամկետ չեն ազատում: Ցմահ դատապարտյաների կարծիքով սա խտրական վերաբերմունք է:

4.ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու չափանիշները **Ֆրանսիայում** ներառված են ոչ թե քրեական, այլ քրեական դատավարության օրենսգրքում: Ըստ այդմ՝ 729-րդ հոդվածը սահմանում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում հնարավոր է դատապարտյալի կողմից նշանակված պատժի առնվազն մեկ երկրորդը, իսկ քրեական օրենսգրքի 132-8, 132-9, 132-10-հոդվածների հատկանիշներով ռեցիդիվ դրսևորած անձանց պարագայում' երկու երրորդը փաստացի կրելուց հետո : Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պատժից պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նվազագույնը 15 տարի ժամկետով ազատազրկում կրելուց հետո:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն' որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է կիրառվել դատարանի կողմից, եթե'

1) դատապարտյալը կրել է պատժի 2/3-ը, սակայն երկու ամսից ոչ պակաս,

2) անձի ազատումը ընդունելի է՝ հաշվի առնելով նաև հասարակու¬թյան անվտանգության ապահովման շահերը,

3) դատապարտյալը համաձայն է, որ իր նկատմամբ պատժից պայ-մանական վաղաժամկետ ազատում կիրառվի:

Որոշ դեպքերում դատարանն իրավունք ունի պայմանական վաղաժամկետ ազատել նաև պատժի կեսը, սակայն վեց ամսից ոչ պակաս ժամկետով ազատազրկում կրած անձին՝ երկու ինքնուրույն հիմքերի առկայության դեպքում, այն է՝

1) դատապարտյալը ազատազրկման ձևով պատիժ է կրում առաջին անգամ, և նշանակված պատիժը չի գերազանցում երկու տարին,

2) դատապարտյալի անձը, նրա կատարած արարքի բնույթը, ազատազրկման վայրում գտնվելու ժամանակ նրա զարգացումը թույլ են տալիս կոնկրետ դեպքը գնահատել որպես առանձնահատուկ:

Գերմանիայի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 573-ն սահմանում է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձը կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է ազատազրկման 15 տարին, հասարակության համար վտանգ չի ներկայացնում, և նրա կողմից պատժի հետագա կրման անհրաժեշտություն չկա: Ի դեպ, հարցի նման կարգավորում է նախատեսված նաև Շվեյցա- րիայի քրեական օրենսդրությամբ:

Ավստրիայի քրեական օրենսդրությունը ևս նախատեսում է պատժից պայմանական-վաղաժամկետ ազատման ինստիտուտ, որը, սակայն, հնարավոր է համարվում դատապարտյալի կողմից ազատազրկման մեկ երկրորդը փաստացի կրելուց հետո: Ընդ որում, ամեն դեպքում այդ ժամկետը չի կարող պակաս լինել երեք ամսից:

Իսպանիայում դատապարտյալը սովորաբար կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի կրումից, եթե փաստացի կրել է պատժի երեք քառորդը, դրսևորել է անբասիր վարքագիծ և հիմք տվել կարծելու, որ հասարակություն վերադառնալու պարագայում նա այլևս հանցանք չի կատարի: Առանձին դեպքերում Իսպանիայի քրեական օրենսդրությունը թույլ է տալիս անձին պայմանական վաղաժամկետ ազատել նաև պատժի երկու երրորդը, իսկ բացառիկ դեպքերում՝ մեկ երկրորդը փաստացի կրելուց հետո, թեև օրենսդրությամբ հստակ չեն սահմանված այն չափանիները, որոնք թույլ կտան տարբերակել, թե որ դեպքերում պետք է որպես պարտադիր պայման դիտվի պատժի 3/4-ը, իսկ որ դեպքերում՝ 2/3-ը կամ 1/2-ը կրած լինելը:

Մեծ Բրիտանիայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել անբասիր վարք դրսևորած այն դատապարտյալի նկատմամբ, ով

փաստացի կրել է պատժի մեկ երրորդը: Ընդ որում, այդ ժամկետը չի կարող պակաս լինել 12 ամսից: Պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նաև նրանք, ովքեր դատապարտված են ցմահ ազատազրկման:

ԱՄՆ-ում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմքերն ու պայմանները տարբեր նահանգներում նույնական չեն: Ընդհանոր մոտեցման համաձայն' պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը թույլատրվում է ոչ պակաս, քան երեք հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում.

1) եթե օրենքը կոնկրետ կատեգորիայի դատապարտյալների' պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար արգելք չի նախատեսում (օրինակ' որոշ նահանգներում նման արգելք է սահմանված ցմահ ազատազրկման դատապարտվածների, ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կատարած անձանց համար),

2) եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի որոշակի ժամկետը,

3) եթե մարմինը, որի վրա դրված է դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծումը, գտնում է, որ տվյալ դատապարտյալը իրեն լավ է դրսևորել և ընդունակ կլինի ազատվելուց հետո զերծ մնալ նոր հանցանքներ կատարելուց, կատարել պատժից պայմանականորեն ազատված անձանց վարքի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի ցուցումները և վտանգ չի ներկայացնի հասարակության համար:

ԱՄՆ-ի նահանգների մեծ մասում դատարանը դատավճիռ կայացնելիս սահմանում է, թե պատժի քանի տարին կրելուց հետո դատապարտյալը պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք կստանա:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի մասով ՀՀ օրենսդրությունը գոնե դեկլարատիվ բնույթով համապատասխանում է զարգացած երկրների օրենսդրությանը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ թեպետ 2017-2018 թվականներին կատարված փոփոխություններով ՀՀ քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսդրությունը մեծ զարգացում է ապրել, սակայն դրա կիրառման ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ խնդիրներ, որոնց մեծ մասի լուծումը կարելի է գտնել հենց օրենսդրական փոփոխություններ կատարելով: Անհրաժեշտ է օրեսդրական փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում:

Այսպես՝

Հաշվի առնելով քրեական օրենքով սահմանված հանցագործությունների վտանգավորության աստիճանը, ինչպես նաև դրանց մեղքի ձևը՝ ՀՀ քրեական օրենսգրքով պայմանական վաղաժամկետ ազատման համար նախատեսված նորմերը ենթակա են վերանայման հետևյալ տրամաբանությամբ.

Դիտավորությամբ և անզգուշությամբ հանցանքներ կատարած անձանց համար նույնանման պահանջներ սահմանելը չի կարող լինել արդարացված օրենքի տրամաբանությունից և պետք է լինի տարանջատված։ պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) անզգուշությամբ ոչ մեծ ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ վեցերորդը.

2) անզգուշությամբ միջին ծանրության և դիտավորությամբ ոչ մեծ հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը.

3) դիտավորությամբ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

Ծանր և առանձնապես ծանր հանցանքներ մասով առկա օրենսդրական դրույթները ենթակա չեն փոփոխման, միայն մի շարք առանձնապես ծանր հանցագործություններ, որոնցով նոր է լրացվել քրեական օրենսգիրքը անհրաժեշտ է ներառել այն հանցագործությունների շարքին, որ դատապարտյալը պետք է կրի նշանակված պատժից ոչ պակաս, քան երեք քառորդը։

Անդրադառնալով քրեական օրենսգրքի մյուս անհրաժեշտ փոփոխություններին՝ նույն հոդվածով ահմանված դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքների մասով առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք առկա են իրավակիրառ պրակտիկայում։

Պրոբացիայի և քրեակատարողական ծառայության զեկույցները ուսումնասիրելիս կարելի է գալ եզրահանգման, որ դրանց դրական կամ բացասական լինելը պայմանավորված է ուղղակի միավորներով, և դրանք հիմնված չեն օրենքով սահմանված պայմանների և չափանիշների ամբողջական, իրական ու բազմակողմանի վերլուծության և դրանից բխող պատճառաբանված եզրահանգումների վրա: Կան փաստական հանգամանքներ, որոնք ուղղակի զրկում են անձին իր նկատմամբ դրական զեկույց կազմելու հնարավորությունից։ Այսպես՝ ռեցեդիվի առկայությունը, չհատուցված քաղաքացիական հայցը, չաշխատելը, կարգապահական տույժի ենթարկելը ինչպես առանձին-առանձին, այնպես էլ

համակցությամբ մեջ որպես կանոն հիմք են հանդիսանում բացասական զեկույց կազմելու համար։

Նշվածով պայմանավորված, դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում դրսևորած վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելը հավանականությունը գնահատող հանգամանքների մասով անհրաժեշտ են մտցնել հստակեցումներ, իսկ զեկույցներում դրանք հաշվի չառնվեն միավորների տեսքով։ Ավելին, անհրաժեշտ է ստեղծել համակարգ, որը կապահովի դատապարտյալներին աշխատանքով, ինչը կարևորագույն երաշխիքն է վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրվելու համար։ Ներկա համակարգը ստեղծել է մի իրավիճակ, երբ քրեակատարողական հիմնարկներում առկա չեն այնպիսի աշխատանքի վայրեր, որոնք հնարավորություն կտան հասարակություն վերաինտեգրվելու ցանկություն ունեցող դատապարտյալներին աշխատել, քանի որ առկա աշխատանքի վայրերում աշխատանքը չի ընդունվում քրեական ենթամշակույթ կրող անձանց կողմից։ Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի համակարգ, որ աշխատանք լինի չնվաստացնող դատապարտյալների համար, ինչպես նաև ուղղակի ազդի դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցի վրա։

Անհրաժեշտ քրեադատավարական փոփոխությունների մեջ ուշադրության է արժանի այն միտքը, որ քրեակատարողական հարաբերությունների լուծումը պետք է կատարվի մասնագիտացված դատավորների կողմից, այսինքն՝ հատուկ մասնագիտացում ունեցող դատավորները ավելի ճիշտ մոտեցումներ կարող են ցուցաբերել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցերը լուծելիս։

Քրեակատարողական համակարգում անհրաժեշտ փոփոխությունները կապված են ինչպես վերոնշյալ փոփոխությունների համատեքստում, այնպես էլ անհրաժեշտ են փոփոխություններ կապված քրեակատարողական հիմնարկների մասով, ինչն արդեն արվել է։ Խոսքը վերաբերում է քրեակատարողական հիմնարկները ըստ անձանց կատարած արարքների հասարակական վտանգավորության աստիճանի և մեղքի ձևի տարանջատելուն։ Նշենք, որ անտրամաբանական է, երբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարած անձինք պատիժ են կրում ծանր և առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց հետ։ Միաժամանակ անհրաժեշտ է տարանջատել ռեցիդիվ ունեցող դատապարտյալներին մնացած կրկնահանցագործ չհամարվող դատապարտյալներից։

5.ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՈՒ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկում ենք

1.Վերանայել պատժի կրումից վաղաժամկետ ազատման դատապարտյալի վերաբերյալ կազմվող քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների զեկույցները

- Քրեակատարողական ծառայության զեկույցի գնահատման չափանիշներից հանել տարիքային ցենզը, աշխատանքով ապահովելու պայմանը, խրախուսանքի առկայության փաստը: Բալային անցողիկ շեմը՝ 28-ից իջեցնել 20-ի:
- Պրոբացիայի ծառայության չկազմի զեկույց, այլ միայն դատապարտյալի վերասոցիալականացմանը ներգրավի միայն նրա պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո:

2. Հիմնել հատուկ դատարաններ, որոնք քննեն միայն պայմանական վաղաժամկետ ազատման հայցեր: Նման գործեր քննելիս հստակ նշել ողջամիտ ժամկետը՝ 1 ամիս: Ցմահ դատապարտյալներին պայմանական վաղաժամկետ ազատելիս՝ հաշվի չառնել տուժողի տեսակետը:

3. Վերապատրաստել պրոբացիայի և քրեակատարողական ծառայությունների աշխատակիցներին՝ որպեսզի նրանք կարողանան հավուր պատշաճի կազմել զեկույցները:

4. Տարանջատել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ժամկետները.

- անզգուշությամբ ոչ մեծ ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ վեցերորդը.
- անզգուշությամբ միջին ծանրության և դիտավորությամբ ոչ մեծ հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը.
- դիտավորությամբ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍՈՑՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց և նախկին դատապարտյալների շրջանում անց կացվեցին սոցհարցումներ՝ պարզելու նրանց առաջարկները պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգի վերաբերյալ

Հարցմանը մասնակցել է 150 մարդ՝ 18 կին և 132 տղամարդ:


70
60
50
40
30
20
10
0
19-30
31-50
51-65
65+


ՆԱԽԿԻՆՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԵՂԵԼ Ե՞Ք, ԵԹԵ ԱՅՈ՝ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ
80
60
40
20
0
62
73
10
5
Երկու անգամ
Առաջին անգամ
Երեքից ավելի
Ցմահ


ԱՄՈՒՍՆԱՑԱԾ Ե՞Ք՝ ՀԱՐՑԻՆ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
80
70
60
50
40
30
20
10
0
62
73
10
Այո
Ոչ
Ամուսնալուծված


ԸՆԴԳՐԿՎԱ՞Ծ ԵՔ ՔԿՀ-Ի ՏԵԽՆԻԿԱ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ
80
70
60
50
40
30
20
10
0
62
73
10
Այո
Ոչ
Ամուսնալուծված



Հարցվածների մասին քրեկատարողական ծառայությունը կազմել է՝

- ✓ Դրական զեկույց -31
- ✓ Բացասական զեկույց-57
- ✓ Պրոբացիոն ծառայությունը
- ✓ Դրական-45
- ✓ Բացասական-43



Ոչ պատախանողների մեծ մասը նշում է

- ✓ Օգտակար չեն, միայն միավորներ են ապահովում-63
- ✓ Հավես չեն ունենում-15
- ✓ Վարչակազմը պատասխանել է՝ խմբերում տեղ չկա-35





Հիմք ընդունելով հարցվողների առաջարկները ինչպես նաև դաշտային աշխատանքների ընթացքում ձեռք բերած տվյալները

- Վերանայել բալային համակարգը ու այն հանել
- Կարգավորել կամավորական և վարձատրվող աշխատանքների գործնթացը
- Դատապարտյալների շրջանում ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի դրսևորման, ինչպես նաև զբաղվածության, անձնական, մշակութային, կրթական զարգացման պատշաճ պայմանների ապահովման համար տարբեր կազմակերպությունների հետ համագործակցություն
-Ցմահ դատապարտված անձանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս՝ դատարանը հաշվի չառնի տուժող կողմի տեսակետը: